	այդ թվում՝										
4110	ԴՐԱՍՈՎ ՎՃԱՐՎՈՐ ԱՇԽԱՏԱՎԱՐՉԵՐ ԵՎ ՀԱՅԵՆԱՎՃԱՐՆԵՐ (տող4111+տող4112+ տող4114)	x	32 924.0	32 924.0	X	32 924.0	32 924.0	X	15 465.8	15465.8	X
	որից՝										
4111	-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	32 424.0	32 424.0	X	32 424.0	32 424.0	X	15 266.3	15 266.3	X
4112	- Դրական տրույմներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112	500,0	500,0	X	500,0	500,0	X	199.5	199.5	X
4114	-Այլ վարձատրություններ	4115	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4120	ԲՆԵՂԵՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՉԵՐ ԵՎ ՀԱՅԵՆԱՎՃԱՐՆԵՐ (տող4121)	x	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
	որից՝										
4121	-Բնեղեն աշխատավարձեր և հավելավճարներ	4121	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4130	ՓԱՏԱՑԻՔԻ ՄՈՑԻՆԱԿԱՆ ԱՊԱՀՂՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ (տող4131)	x	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
	որից՝										
4131	-Մոցիայական ապահովության վճարներ	4131	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4200	1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԶԵՌՔ ԲԵՐՈՒՄ (տող4210+տող4220+տող4230+տող4240+ տող4250+տող4260)	x	24 948.4	24 948.4	X	31 696.4	31 696.4	X	15 826.0	15 826.0	X
	այդ թվում՝										
4210	ՇԱՐՈՒՄԱԿԱՆ ԾԱՌԱՅԵՐ (տող4211+տող4212+տող4213+տող4214+ տող4215+տող4216+տող4217)	x	8 825.0	8 825.0	X	10 663.0	10 663.0	X	5 477.1	5 477.1	X
	որից՝										
4211	-Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	4211	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4212	-Էներգետիկ ծառայություններ	4212	7 390.0	7 390.0	X	7 590.0	7 590.0	X	4 182.1	4 182.1	X
4213	-Կոմունալ ծառայություններ	4213	35,0	35,0	X	1 270,0	1 270,0	X	324.6	324.6	X
4214	-Կապի ծառայություններ	4214	850.0	850.0	X	1 290.0	1 290.0	X	668.2	668.2	X
4215	-Ապահովագրական ծախսեր	4215	550.0	550.0	X	513.0	513.0	X	302.3	302.3	X
4216	-Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4217	-Արտագերատեսչական ծախսեր	4217	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4220	ԳՈՐԾՈՒՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԵՐԱՆՎԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅԵՐ (տող4221+տող4222+տող4223)	x	1 800,0	1 800,0	X	1 800,0	1 800,0	X	945,0	945,0	X
	որից՝										
4221	-Ներքին գործուղումներ	4221	300,0	300,0	X	300,0	300,0	X	45,0	45.0	X
4222	-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	4222	1500,0	1500,0	X	1500,0	1500,0	X	900,0	900,0	X
4223	-Այլ տրանսպորտային ծախսեր	4229	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4230	ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՌՔ ԲԵՐՈՒՄ (տող4231+տող4232+տող4233+տող4234+ տող4235+տող4236+տող4237+տող4238)	x	2 800.0	2 800.0	X	3 320.0	3 320.0	X	1 476.6	1 476.6	X
	որից՝										
4231	-Վարչական ծառայություններ	4231	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4232	-Համակարգչային ծառայություններ	4232	200.0	200.0	X	300.0	300.0	X	113.2	113.2	X
4233	-Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	4233	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4234	-Տեղակատվական ծառայություններ	4234	800,0	800,0	X	800,0	800,0	X	379.2	379.2	X
4235	-Կառավարչական ծառայություններ	4235	200.0	200,0	X	200,0	200,0	X	166,0	166,0	X
4236	- Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	4236	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4237	-Ներկայացուցչական ծախսեր	4237	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4238	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	1 600,0	1 600,0	X	2 020.0	2 020,0	X	818.2	818.2	X
4240	ԱՅԼ ՄԱՍՆԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՌՔ ԲԵՐՈՒՄ	x	1 015,0	1 015,0	X	2 015,0	2 015,0	X	957.7	957.7	X

	(տող 4241)										
	որից՝										
4241	-Մասնագիտական ծառայություններ	4241	1 015,0	1 015,0	X	2 015,0	2 015,0	X	957.7	957.7	X
4250	ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԼՀՊԱՆՈՒՄ (ծառայություններ և նյութեր) (տող 4251+տող 4252)	x	658.4	658.4	X	4 658.4	4 658.4	X	220.7	220.7	X
	որից՝										
4251	-Ընթերցի և կառուցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	0,0	0,0	X	4 000,0	4 000,0	X	0,0	0,0	X
4252	-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	658.4	658.4	X	658.4	658.4	X	220.7	220.7	X
4260	ՆՅՈՒԹԵՐ (տող 4261+տող 4262+տող 4263+տող 4264+տող 4265+տող 4266+տող 4267+տող 4268)	x	9 850.0	9 850.0	X	9 240.0	9 240.0	X	6 748.9	6 748.9	X
	որից՝										
4261	-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	3 700.0	3 700.0	X	5 670.0	5 670.0	X	5 093.4	5 093.4	X
4262	-Գյուղատնտեսական ապրանքներ	4262	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4263	-Վերապատրաստման և ուսուցման նյութեր (աշխատողների վերապատրաստում)	4263	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4264	-Տրանսպորտային նյութեր	4264	5 300.0	5 300.0	X	2 800,0	2 800,0	X	1 321.5	1 321.5	X
4265	-Շրջակա միջավայրի պաշտպանության և զիտական նյութեր	4265	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4266	-Առողջապահական և լաբորատոր նյութեր	4266	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4267	-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	600,0	600,0	X	100,0	100,0	X	0,0	0,0	X
4268	-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	250,0	250,0	X	670,0	670,0	X	334,0	334,0	X
4300	1.3 ՏՈՎՈՍԱՎԱՐՆԵՐ (տող 4310+տող 4320+տող 4330)	x	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
	այդ թվում՝										
4310	ՆԵՐՔԻՆ ՏՈՎՈՍԱՎԱՐՆԵՐ (տող 4311+տող 4312)	x	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
	որից՝										
4311	-Ներքին արժեթղթերի տոկոսավճարներ	4411	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4312	-Ներքին վարկերի տոկոսավճարներ	4412	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4320	ԱՐՏԱՔԻՆ ՏՈՎՈՍԱՎԱՐՆԵՐ (տող 4321+տող 4322)	x	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
	որից՝										
4321	-Արտաքին արժեթղթերի գծով տոկոսավճարներ	4421	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4322	-Արտաքին վարկերի գծով տոկոսավճարներ	4422	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4330	ՓՈԽՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԿԱՄՎԱՐՆԵՐ (տող 4331+տող 4332+տող 4333)	x	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
	որից՝										
4331	-Փոխանակման կուրսերի բացասական տարբերություն	4431	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4332	-Տույժեր	4432	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4333	-Փոխառությունների գծով տուրքեր	4433	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4400	1.4 ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ (տող 4410+տող 4420)	x	53 599.2	53 599.2	X	63 599.2	63 599.2	X	39 357.4	39 357.4	X
	այդ թվում՝										
4410	ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (տող 4411+տող 4412)	x	53 599.2	53 599.2	X	63 599.2	63 599.2	X	39 357.4	39 357.4	X
	որից՝										
4411	-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	53 599.2	53 599.2	X	63 599.2	63 599.2	X	39 357.4	39 357.4	X
4412	-Սուբսիդիաներ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4512	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4420	ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ (ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (տող 4421+տող 4422)	x	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
	որից՝										
4421	-Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) ոչ ֆինանսական կազմակերպություններին	4521	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4422	-Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) ֆինանսական կազմակերպություններին	4522	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4500	1.5 ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 4510+տող 4520+տող 4530+տող 4540)	x	1 730.0	1730.0	X	930,0	930,0	X	0,0	0,0	X
	այդ թվում՝										
4510	ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՕՏԱՐԵՐԿՐԾԱ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (տող 4511+տող 4512)	x	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
	որից՝										
4511	-Ընթացիկ դրամաշնորհներ օտարերկրյա կառավարություններին	4611	0,0	0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4512	-Կապիտալ դրամաշնորհներ օտարերկրյա կառավարություններին	4612	0,0	0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4520	ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (տող 4521+տող 4522)	x	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X

	որից՝										
4521	-Ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին	4621	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4522	-Կապիտալ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին	4622	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4530	ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅՈՒ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ (տող4531+տող4532+տող4533)	x	1730.0	1730.0	X	930,0	930,0	X	0,0	0,0	X
	որից՝				X			X			X
4531	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4637	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4532	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին	4638	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4533	- Այլ ընթացիկ դրամաշնորհներ (տող 4534+տող 4537 +տող 4538)	4639	1730.0	1730.0	X	930,0	930,0	X	0,0	0,0	X
	այդ թվում՝				X			X			X
4534	- տեղական ինքնակառավարման մարմիններին (տող 4535+տող 4536) որից՝		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4535	Երևանի համաքաղաքային ծախսերի ֆինանսավորման համար				X			X			X
4536	այլ համայնքներին		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4537	- ՀՀ պետական բյուջեին		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4538	- այլ		1730.0	1730.0	X	930,0	930,0	X	0,0	0,0	X
4540	ԿԱՊԻՏԱԿԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅՈՒ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ (տող4541+տող4542+տող4543)	x	0,0	0	X	0,0	0	X	0,0	0,0	X
	որից՝										
4541	-Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4655	0,0	0	X	0,0	0	X	0,0	0	X
4542	-Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին	4656	0,0	0	X	0,0	0	X	0,0	0	X
4543	-Այլ կապիտալ դրամաշնորհներ (տող 4544+տող 4547 +տող 4548)	4657	0,0	0	X	0,0	0	X	0,0	0	X
	այդ թվում՝										
4544	- տեղական ինքնակառավարման մարմիններին (տող 4545+տող 4546)		0,0	0	X	0,0	0	X	0,0	0	X
	որից՝				X			X			X
4545	Երևանի համաքաղաքային ծախսերի ֆինանսավորման համար		0,0	0	X	0,0	0	X	0,0	0	X
4546	ՀՀ այլ համայնքներին		0,0	0	X	0,0	0	X	0,0	0	X
4547	- ՀՀ պետական բյուջեին		0,0	0	X	0,0	0	X	0,0	0	X
4548	- այլ		0,0	0	X	0,0	0	X	0,0	0	X
4600	1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԼՅՈՑՆԵՐԻՆ (տող4610+տող4630+տող4640)	x	1 100.0	1 100.0	X	1100.0	1 100.0	X	570.0	570.0	X
	այդ թվում՝		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4610	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԼՈՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ										
	այդ թվում՝		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4610	- Տնային տնտեսություններին դրամով վճարվող սոցիալական ապահովության վճարներ	4711	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4620	- Սոցիալական ապահովության բնեղեն նպաստներ ծառայություններ մատուցողներին	4712	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4630	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻՑ) (տող4631+տող4632+տող4633+տող4634)	x	1 100.0	1 100.0	X	1100.0	1 100.0	X	570.0	570.0	X
	որից՝		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4631	-Հուղերկավորության նպաստներ բյուջեից	4726	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4632	-Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից	4727	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4633	-Բնակարանային նպաստներ բյուջեից	4728	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4634	-Այլ նպաստներ բյուջեից		1 100.0	1 100.0	X	1100.0	1 100.0	X	570.0	570.0	X
4640	ԿԵՆՍԱԼՅՈՑՆԵՐԻՆ (տող4641)	x									
	որից՝		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4641	-Կենսաթոշակներ	4741	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4700	1.7 ԱՅՈՒ ԾԱՆՍԵՐ (տող4710+տող4720+տող4730+տող4740+տող4750+տող4760+տող4770)	x	6 579.4	6579.4	0.0	1 840.9	1 840.9	0.0	423.1	423.1	0.0
	այդ թվում՝										
4710	ՆԿԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ (ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (տող4711+տող4712)	x	150.0	150.0	X	150.0	150.0	X	110.0	110.0	X
	որից՝		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4711	- Տնային տնտեսություններին ծառայություններ մատուցող՝ շահույթ չի նետապնդող կազմակերպություններին	4811	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X

	նվիրատվություններ										
4712	-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	150,0	150,0	X	150,0	150,0	X	110,0	110,0	X
4720	ՀԱՌԻՅԵՐ, ՊԱՐՏԱՂԻՐ ԿՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՒՆԵ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՌԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԻՈՎՈՒՄ ԵՆ ՄԻՍՅԱՆՑ ՆԿԱՏԱՍԱՐ (տող4721+տող4722+տող4723+տող4724)	x	628.0	628.0	X	588.0	588.0	X	313.1	313.1	X
	որից՝		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4721	-Աշխատավարձի ֆոնդ	4821	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4722	-Այլ հարկեր	4822	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4723	-Պարտադիր վճարներ	4823	628,0	628,0	X	588,0	588,0	X	313.1	313.1	X
4724	-Պետական հատվածի տարբեր մակարդակների կողմից միմյանց նկատմամբ կիրառվող տույժեր	4824	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4730	ՂԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿԱԾ ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒՂԱՆՔՆԵՐ (տող4731)	x									
	որից՝		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4731	-Ղատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ	4831	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4740	ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԿԱՄ ԱՅԼ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԿՆԱՍՆԵՐԻ ԿԱՄ ԿՆԱՍԿԱԾՔՆԵՐԻ ԿԵՐԱԿԱՆՁՆՈՒՄ (տող4741+տող4742)	x									
	որից՝		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4741	-Բնական աղետներից առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում	4841	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4742	-Այլ բնական պատճառներով ստացած վնասվածքների վերականգնում	4842	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4750	ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏԵԿԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԿՆԱՍՆԵՐԻ ԿԱՄ ԿՆԱՍԿԱԾՔՆԵՐԻ ԿԵՐԱԿԱՆՁՆՈՒՄ (տող4751)	x									
	որից՝		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4751	-Կառավարման մարմինների գործունեության հետևանքով առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում	4851	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4760	ԱՅԼ ԾԱՆՍԵՐ (տող4761)	x									
	որից՝		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4761	-Այլ ծախսեր	4861	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
4770	ՊԱՀՈՒՍԱՑՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող4771)	x	5 801.4	5 801.4	0,0	1 102.9	1 102.9	0,0	0,0	0,0	0,0
	որից՝										
4771	-Պահուստային միջոցներ	4891	5 801.4	5 801.4	0,0	1 102.9	1 102.9	0,0	0,0	0,0	0,0
4772	այդ թվում՝ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ	x	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
5000	Բ. ՈՅ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱՆՍԵՐ (տող5100+տող5200+տող5300+տող5400)	x	407 811.8	X	407 811.8	407 811.8	X	407 811.8	50 418.8	X	50 418.8
	այդ թվում՝										
5100	1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող5110+տող5120+տող5130)	x	407 811.8	X	407 811.8	407 811.8	X	407 811.8	50 418.8	X	50 418.8
	այդ թվում՝										
5110	ԵՆՆՔԵՐ ԵՎ ԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող5111+տող5112+տող5113)	x	358 129.0	X	358 129.0	316 629.0	X	316 629.0	38 659.4	X	38 659.4
	որից՝		0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
5111	- Ենթերիկ և շինությունների ձեռք բերում	5111	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
5112	- Ենթերիկ և շինությունների կառուցում	5112	320 129.0	X	320 129.0	237 629.0	X	237 629.0	19 526.1	X	19 526.1
5113	- Ենթերիկ և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	38 000.0	X	38 000.0	79 000.0	X	79 000.0	19 133.4	X	19 133.4
5120	ՄԵՔԵՆՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ (տող5121+ տող5122+տող5123)	x	40 082.8	X	40 082.8	79 582.8	X	79 582.8	7 459.4	X	7 459.4
	որից՝										
5121	- Տրանսպորտային սարքավորումներ	5121	30 000,0	X	30 000,0	30 000,0	X	30 000,0	56,0	X	56,0
5122	- Վարչական սարքավորումներ	5122	4 300,0	X	4 300,0	7 800,0	X	7 800,0	3 692.6	X	3 692.6
5123	- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	5 782.8	X	5 782.8	41 782.8	X	41 782.8	3 710.8	X	3 710.8
5130	ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 5131+տող 5132+տող 5133+տող5134)	x	9 600.0	X	9 600.0	11 600.0	X	11 600.0	4 300.0	X	4 300.0
	որից՝										
5131	-Աձեցվող ակտիվներ	5131	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
5132	- Ոչ նյութական հիմնական միջոցներ	5132	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
5133	- Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր	5133	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
5134	- Նախագծահետազոտական ծախսեր	5134	9 600,0	X	9 600,0	11 600,0	X	11 600,0	4 300,0	X	4 300,0
5200	1.2 ՊԱՇԱՐՆԵՐ (տող5211+տող5221+տող5231+տող5241)	x									
	այդ թվում՝		0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
5211	- Համայնքային նշանակության թաղմավարական պաշարներ	5211	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
5221	- Նյութեր և պարագաներ	5221	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0

5231	- Վերավաճառքի համար նախատեսված ապրանքներ	5231	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
5241	-Սպառման նպատակով պահվող պաշարներ	5241	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
5300	1.3 ԲԱՐՉՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐ (տող 5311)	x									
	այդ թվում՝		0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
5311	-Բարձրարժեք ակտիվներ	5311	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
5400	1.4 ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ (տող 5411+տող 5421+տող 5431+տող 5441)	x									
	այդ թվում՝		0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
5411	-Հող	5411	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
5421	-Ընդերքային ակտիվներ	5421	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
5431	-Այլ բնական ծագում ունեցող ակտիվներ	5431	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
5441	-Ոչ նյութական չարտադրված ակտիվներ	5441	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
6000	Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (տող 6100+տող 6200+տող 6300+տող 6400)	x	-70 000,0	X	-70 000,0	-70 000,0	X	-70 000,0	-21 280.4	X	-21 280.4
	այդ թվում՝		0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
6100	ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (տող 6110+տող 6120+տող 6130)	x									
	այդ թվում՝		0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
6110	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	6111	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
6120	ՇԱՐժԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	6121	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
6130	ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	6131	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
6200	ՊԼԱՇԱՐՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (տող 6210+տող 6220)	x									
	այդ թվում՝		0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
6210	ՈՒՋԱՆԱԿԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՊԼԱՇԱՐՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	6211	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
6220	ԱՅԼ ՊԼԱՇԱՐՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (տող 6221+տող 6222+տող 6223)	x									
	որից՝		0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
6221	- Արտադրական պաշարների իրացումից մուտքեր	6221	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
6222	- Վերավաճառքի համար ապրանքների իրացումից մուտքեր	6222	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
6223	- Սպառման համար նախատեսված պաշարների իրացումից մուտքեր	6223	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
6300	ԲԱՐՉՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (տող 6310)	x									
	այդ թվում՝		0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
6310	ԲԱՐՉՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	6311	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
6400	ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ ՝ (տող 6410+տող 6420+տող 6430+տող 6440)	x	-70 000,0	X	-70 000,0	-70 000,0	X	-70 000,0	-21 280.4	X	-21 280.4
	այդ թվում՝										
6410	Հողի ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	6411	-70 000,0	X	-70 000,0	-70 000,0	X	-70 000,0	-21 280.4	X	-21 280.4
6420	ՕԳՏԱԿԱՐ ՀԱՄԱՇՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	6412	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
6430	ԱՅԼ ԲՆԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	6413	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
6440	ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	6414	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հունիս 2014 թվականի թիվ 60-Ն

ԾԱՂԿԱԶՈՐ ԲԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի
ԹԻՎ 38-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ծաղկաձոր քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 14-ի "Ծաղկաձոր քաղաքի 2013-2016 թվականների քառամյա ծրագրի հաստատման մասին" թիվ 38-Ն որոշման հավելվածում կատարել լրացումներ՝ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ:

2. Մույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱԶԱԳԱՆ

2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՐՆԻԿ

4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ

5. ԳՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ԲԱՂԱՔԱՊԵՏ

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ



ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար Ա.Լ. Հարությունյան

Հաստատվել է համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 01-ի թիվ 60-Ն
որոշմամբ



ԾԱՂԿԱԶՈՐ

2013թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
Ի՞նչ է ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ.....	4
1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	5
1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ.....	5
1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	6
1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ.....	8
1.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	8
1.5 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ.....	9
1.6 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ.....	9
1.7 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ.....	10
1.8 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....	10
1.9 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ.....	11
1.10 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ.....	11
1.11 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ.....	12
1.12 ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ.....	12
1.13 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ.....	13
1.14 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ.....	14
1.15 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ.....	14
1.16 ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ.....	14
1.17 ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ- ՆԵՐԸ.....	15
2. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԻՐԱԿԱՆԱՅՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	15
3. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....	16
3.1 ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ.....	16
3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ.....	16
4. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ.....	16
4.1 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ.....	16
4.2 ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ- ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ.....	17
4.2.1 Բնակելի և ոչ բնակելի ֆոնդերի շահագործում և նորոգում.....	17
4.2.2 Աղբահանություն և փողոցների մաքրում.....	17
4.2.3 Կանաչ տարածքների խնամք և ոռոգում.....	17
4.2.4 Ջրամատակարարում և ջրահեռացում.....	18
4.2.5 Արտաքին լուսավորություն.....	18
4.2.6 Թափառող կենդանիների վնասազերծման միջոցառումներ.....	18
4.3 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ.....	18
4.4 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ.....	18
4.5 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....	18
4.6 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ.....	19

4.7 ՄՇԱԿՈՒՅԹ.....	19
4.8 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ.....	19
4.9 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ.....	19
4.10 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	19
4.10.1 Տեղեկատվական կենտրոններ.....	19
4.10.2 Զարգացման ծրագրեր և միջազգային համագործակցություն.....	19
4.10.3 Հանրային կապեր, լրատվություն.....	20
4.11 ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....	20
4.12 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....	20
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ.....	21
6. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՍՓՈՓՈՒՄ.....	24
7. ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.....	26
ԵԶՐԱՓՈԿՈՒՄ.....	29
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 1,2	

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ի՞ՆՉ Է ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի քառամյա զարգացման ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծություն և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Ծաղկաձոր քաղաքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում, Հրազդան մարզկենտրոնից 8կմ հյուսիս- արևմուտք, մայրաքաղաք Երևանից հեռավորությունը կազմում է 50կմ, բնակչությունը մոտ 1700 մարդ:



Քաղաքի տարածքը մարդու կողմից բնակեցվել է դեռևս Ք.ա. 3-րդ հազարամյակում: Վաղ միջնադարում այն Մեծ Հայքի Այրարատ նահանգի Վարաժնունիք գավառի նշանավոր բնակավայրերից մեկն է եղել: Հնում այն կոչվել է Ծաղկունյաց ձոր, Կեչառույք, Կեչառիս, Դարաչիչագ, իսկ 1957թվականին՝ Ծաղկաձոր:

995 – 1003 թվականներին Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը կառուցում է Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, դրանով փաստորեն հիմք դնելով Կեչառիսի վանական համալիրին, որն էլ հետագայում վերածվում է միջնադարյան Հայաստանի հոգևոր և կրթա – մշակութային նշանավոր կենտրոնի:

Միջնադարում այստեղ գործել է բարձրագույն տիպի դպրոց՝ համալսարան, որը կապեր է ունեցել Կիլիկիայի, Սյունաց և Գուգարքի նմանատիպ հաստատությունների հետ: 17– րդ դարերի հիշատակարաններում նշվում է, որ դեռևս կանգուն են համալիրի բոլոր եկեղեցիներն ու մատուռները և հանդիսացել է եպիսկոպոսական թեմ:

1828 թվականին Երևանի նախկին խանությունը Թուրքմենչայի պայմանագրով միացվում է ռուսական կայսրությանը: Սկսած 1835թ. ամռանից՝ հունիսի սկզբներից մինչև սեպտեմբեր Երևանի նահանգի և գավառի պաշտոնյաները տեղափոխվում էին Ծաղկաձոր՝ հանգստանում և աշխատում այստեղ: Դրա շնորհիվ Ժամանակի ընթացքում երբեմնի սակավաբնակ Ծաղկաձորը վերածվում է ամառանոցային նահանգական կենտրոնի:

Խորհրդային տարիներին Ծաղկաձորը պահպանեց և զարգացրեց ամառանոցային քաղաքի իր ավանդույթները: Այստեղ կառուցվեցին երկու տասնյակի չափ պիոներական ճամբարներ, մեկ տասնյակի հասնող հանգստյան տներ, որտեղ իրենց հանգիստն էին անցկացնում հազարավոր մարդիկ մեր և միության տարբեր հանրապետություններից: Այստեղ կազմակերպվում էին միջազգային գիտաժողովներ և խորհրդակցություններ և այլն:

1957 թվականին բնակավայրը ստացավ քաղաքատիպ ավանի կարգավիճակ:

1966 – 1967 թվականներին այստեղ կառուցվեց ԽՍՀՄ Գլխավոր մարզահամալիրը, որը Ծաղկաձորին բերեց համամիութենական և միջազգային ճանաչում, որտեղ իրենց մարզումներն էին անցկացնում աշխարհի ուժեղագույն մարզիկները:

1969–1971 թվականներին Թեղենիս լեռան լանջին կառուցվեց բազկաթոռային ճոպանուղին, որը Ծաղկաձորը դարձրեց հրապուրիչ նաև ձմռան ամիսներին: Այսօր այն վերակառուցվել է և համապատասխանում է և համապատասխանում է արդի միջազգային չափանիշներին:

Խորհրդային Միության փլուզումով ծանր ու դժվարին օրեր ապրեց նաև Ծաղկաձորը: Սակայն այդ օրերն այսօր մնացել են ետևում: Վերջին տարիներին քաղաքում վերակառուցվեցին ու կառուցվեցին մոտ 40 ժամանակակից հանգստյան տներ և հյուրանոցներ, արդիականացվեցին նաև սպասարկման ոլորտի ենթակառուցվածքները:


Քաղաքը իր մեղմ կլիմայով և ձյունառատ ձմեռով հանդիսանում է այն եզակի բնակավայրերից, որը բնակավայրերից է, որը գրավիչ է տարվա բոլոր եղանակներին:

Քաղաքը գտնվում է Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավ արևելյան լանջին, միջին բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1850մ: Կլիման բարեխառն է, օդը առողջարար և մեղմ: Տարեկան տեղումների քանակը կազմում է 600- 800 մմ, իսկ տարեկան միջին ջերմաստիճանը ձմռանը - 6c, ամռանը՝ +22 c:

1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակչությունը 01.01.2013 թվականի դրությամբ կազմում է մոտ 1500 մարդ: Ազգային առումով այն գրեթե միատարր է (հայեր՝ 95.3 %, եզդիներ՝ 3.1%, ռուսներ՝ 1.0%, այլ ազգերի ներկայացուցիչներ՝ 0.6%) : Բնակչության ընդհանուր թվում կանայք կազմում են 48.1%, տղամարդիկ՝ 51.9%:

Բնակչության տոկոսային հարաբերություններն ըստ սեռերի



Քաղաքի տնային տնտեսությունները բաղկացած է 583 ընտանիքից: Միջին հաշվով 1 տնային տնտեսությունը կազմված է 2.5 մարդուց :

Բնակչության կազմը ըստ տարիքային խմբերի ունի հետևյալ տեսքը՝


մինչև 18 տարեկան-241 մարդ -16%,

18-45 տարեկան- 767 մարդ- 51%,

45-63 տարեկան- 376 մարդ-25%,

63 տարեկան և ավելի- 119- 8 %:

Տարիքային խմբերը



Սեռատարիքային սանդղակի վերլուծությունը ցույց է տալիս, որ կանայք ավելի երկարակյաց են, քան տղամարդիկ: Այսպես՝ 63 և ավել տարիք ունեցող բնակիչների մեջ կանայք կազմում են 61.3%, իսկ տղամարդիկ՝ 38.7%:

Կյանքի միջին տևողությունը քաղաքում փաստացի կազմում է 75-78 տարեկան:

Մահերի վերլուծությունը ցույց է տալիս, որ բնակիչները առավել շատ մահանում են՝

- Սիրտ –անոթային հիվանդություններից- 58%,
- Նորագոյացումներից- 20%,
- Աղեստամոքսային հիվանդություններից-8%,
- Այլ հիվանդություններից- 14%:

Աշխատունակ բնակչության թիվը կազմում է 1140 մարդ, որոնցից աշխատանքով ապահովված են 675 մարդ: Տարածքային զբաղվածության կենտրոնում գրանցված են 17 մարդ, որոնց գերակշիռ մասը կանայք են: Կենսաթոշակառուների թիվը համայնքում կազմում է 116 մարդ: Քաղաքում կան 38 հաշմանդամներ, որից 3-ը անչափահասներ են: Հայրենական պատերազմի մասնակիցներ համայնքում չկան: Արցախի ազատամարտում զոհվածների ընտանիքների թիվը համայնքում 1-ն է, իսկ վիրավոր ազատամարտիկների թիվը՝ 2:

1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Համայնքի ավագանին և քաղաքապետն ընտրվում են 4 տարի ժամկետով: Ծաղկաձոր քաղաքային համայնքի գործող ավագանին ընտրվել է 2012 թվականի սեպտեմբերին և բաղկացած է 7 անդամից: Ծաղկաձորի քաղաքապետը ընտրվել է 2012 թվականի սեպտեմբերին, նրա աշխատակազմը (Հավելված 1) բաղկացած է 24 հաստիքից հետևյալ կառուցվածքով՝ քաղաքապետի տեղակալ, քաղաքապետի օգնական, աշխատակազմի քարտուղար, ներքին աուղիտի բաժին (1), գլխավոր մասնագետներ (5), առաջատար մասնագետներ (5), 1-ին կարգի մասնագետներ (2), սպասարկող անձնակազմ (7):

1.4 ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի տարածքում գործում են մոտ 40 հյուրանոցներ և հանգստյան տներ, 1 կապի հանգույց, 1 ջրմուղկոյուղու սպասարկման գրասենյակ:

Շինարարական ոլորտում զբաղվածների թիվը շուրջ 80 է:

Առևտրի ոլորտում զբաղվածների թիվը կազմում է շուրջ 120, իսկ սպասարկման ոլորտում 345 մարդ:

Հաշվի առնելով նաև այլ ոլորտների պետական և համայնքային կազմակերպությունների աշխատակազմերը, զբաղվածների թիվը համայնքում կազմում է շուրջ 130 մարդ:

1.5 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Ծաղկաձոր քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը սահմանված է ՀՀ Կառավարության 31.03.1997 թվականի թիվ 51 որոշմամբ (Հավելված 2):

Համայնքի սեփականություն համարվող գույքի ֆիզիկական վիճակը բնութագրվում է որպես բավարար, ընդ որում աղյուսակ 1-ում առկա ենթակառուցվածքները ենթակա են վերանորոգման: Դրանց կապիտալ նորոգման, փոխարինման, ինչպես նաև նոր ենթակառուցվածքների կառուցման անհրաժեշտությունը ներկայացված է աղյուսակում:

Աղյուսակ 1

Կառույց	Նորոգման/վերանորոգման /փոխարինման կարիք
Մանկապարտեզի շենք	Վերանորոգում
Մշակույթի կենտրոն	Նոր շենքի կառուցում
Փողոցներ, հրապարակներ, խաղահրապարակներ	Հիմնանորոգում, նորերի կառուցում
Հուշակոթողներ, շատրվաններ, ջրավազաններ	Նորերի կառուցում, նորոգում
Հենապատեր, կամուրջներ, աստիճաններ, գերեզմանոցի ցանկապատեր	Վերանորոգում, կառուցում

1.6 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքն ունի 6 բազմաբնակարան բնակելի շենք 166 բնակարաններով՝ կառուցված 1970-1981 թվականներին և 508 առանձնատուն: Բազմաբնակարան շենքերը (5-ը՝ 5 հարկանի, 1-ը երկհարկանի) բոլորը քարից են, թեք տանիքներով: 2013 թվականին քաղաքապետարանի միջոցներով վերանորոգվել են շենքերի մի մասի տանիքները: Մինչև 2017 թվականը նախատեսվում է կատարել բոլոր բազմաբնակարան շենքերի տեխնիկական զննություն և տեխնիկական անձնագրերի ստեղծում: Ինչպես նաև հետևյալ աշխատանքները՝

- Մնացած շենքերի տանիքների վերանորոգում,
- բակերի և մուտքերի լուսավորում,
- գոյություն ունեցող խաղահրապարակների բարեկարգում և նորերի կառուցում:

Բազմաբնակարան շենքերի ընդհանուր մակերեսը կազմում է 10351 քմ: Բազմաբնակարան շենքերի սպասարկումը իրականացվում է «Ծաղկաձորի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի կողմից: Համայնքում կան 502 առանձնատներ, որոնցից 47-ը կիսակառույց են: Համայնքի վարչական տարածքում առկա է շուրջ 184 ավտոտնակ: Ավտոտնակների ընդհանուր մակերեսը կազմում է 4638 քմ:

1.7 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

- ՀՀ քաղաքացիներին պատկանող հողեր՝ 223.02հա,
- ՀՀ իրավաբանական անձանց պատկանող հողեր՝ 759.33հա,
- Համայնքային պատկանելիության հողերը՝ 204.83հա,
- Պետական հողեր՝ 431.11հա:

Հողային ֆոնդի բաշխումը ըստ նպատակային նշանակության և հողատեսքերի

- Համայնքի վարչական տարածքը կազմում է 1618.29հա,
- Բնակարանային ֆոնդը՝ 162.71հա,
- Արտադրական նշանակության հողեր՝ 5.63հա,
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 59.16հա,
- Գերատեսչական հիմնարկների զբաղեցրած հողեր՝ 0.79հա,
- Հանգստի գոտիներ՝ 1014.54հա,
- Անտառային գոտի՝ 366.96հա,
- Զբային ֆոնդեր՝ 8.5հա:

1.8 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ծաղկաձոր քաղաքը հանդիսանալով զբոսաշրջության կենտրոն, ամառային և ձմեռային ժամանակաշրջաններում բազմապատկվում է քաղաք այցելողների թվաքանակը, հետևաբար ավելի հրատապ են դառնում բնության և շրջակա միջավայրի պահպանության հետ կապված խնդիրների լուծումները: Պարբերաբար կատարվող այցելությունների միջոցով հայտնաբերվում և չեզոքացվում են կանաչ գոտիների աղտոտվածությունը՝ կենցաղային թափոններից, անտառածածկ գոտիների հրդեհավտանգ հանգամանքների առկայությունը: Նախատեսվում և իրականացվում է անտառհիմնման ու անտառվերականգնման աշխատանքներ: Ուսումնասիրվում են սողների և քարաթափումների հնարավոր սպառնալիքները: Նմանատիպ խնդիրներ են առկա քաղաքի Սարալաջի փողոցի առանձին հատվածներում, որոնց լուծման համար մշակվում են համապատասխան տարբերակներ: Յուրաքանչյուր գարնանը օրակարգային դարձած՝ կանաչ գոտիների ավելացման և վերականգնման, ռոռզման համակարգերի վերանորոգման, ծաղկանոցների հիմնման, սիզամարգերի և կանաչ ցանկապատերի խուզման ու խնամքի աշխատանքները իրականացվում են պլանավորված ձևով:

Քաղաքի աղբահանության աշխատանքները իրականացվում են « Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից, որի մեքենայական պարկը համալրում են հետևյալ հիմնական միջոցները՝

Հ/Հ	Հիմնական միջոցի անվանումը	Չ.Բ	քանակ
1	Տրակտոր "Բելառուս 320.4 " / հավաքածու իր պատկանելիքներով /	հատ	1
2	Տրակտոր "ԴՏ 75 "	հատ	1
3	Աղբատար մեքենա KO 413 ԳԱԶ 5314	հատ	1
4	Ավտոմեքենա KRAZ 256-B-1	հատ	1
5	Ավտո լվացող մեքենա ԶԻԼ- 130	հատ	1
6	Գրեյդեր ԴԶ 99	հատ	1
7	Ավտոբուս ՊԱԶ 32054	հատ	2
8	Աղբատար մեքենա KO- 440 ԳԱԶ 48321-01	հատ	1
9	Ավտոաշտարակ 1982թ GAZ-AP-17(gaz 53A)	հատ	1
10	Ավտոմեքենա Զիլ ՄՄԶ-4502 Ինքնաթափ	հատ	1
11	Զյուն մաքրող, բազմաֆունկցիոնալ մեքենա MERCEDES- BENZ U-500	հատ	1
12	Խոզանակ ամրացման մեխանիզմով	հատ	1
13	Խոտհնձիչ P53-625D	հատ	1
14	Մոտոբլոկ իր կցամասով	հատ	1
15	Խոտհնձիչ- բենզինե PSKL7213-61295	հատ	1
16	Շերեփավոր ամբարձիչ CAT-428D	հատ	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		

Սան.մաքրման աշխատանքները իրականացվում են համակարգված ձևով՝ ըստ համապատասխան գրաֆիկի: Քաղաքի բնակավայրում հավասարաչափորեն տեղադրված են աղբամաններ և աղբարկղեր: Հավաքված աղբը տեղափոխվում և տեղադրվում է Հրազդան քաղաքի աղբավայրում:

1.9 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 22.950 կմ, մոտ 170 հազ. քմ ընդհանուր մակերեսով, որոնց 90% այս տարի վերանորոգվել և բարեկարգվել են:

Գոյություն ունի համայնքի ենթակայության 4 կամուրջ, որոնք գտնվում են բարվոք վիճակում:

Տրանսպորտի և հետիոտների կանոնավոր շարժը կազմակերպելու նպատակով տեղադրվել են այս տարի 10 ճանապարհային երթևեկության նշաններ:

2013 թվականին երթևեկության անվտանգության նպատակով համայնքում իրականացվել է ճանապարհների գծանշում:

Առկա է տրանսպորտային հաղորդակցություն մարզկենտրոնի և մայրաքաղաքի հետ:

1.10 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՄՊԱՍՍԱՐԿՈՒՄ

Համայնքի տարածքում գործում են շուրջ 45 հատ առևտրի և սպասարկող օբյեկտներ, որոնց մի մասի գործունեությունը սեզոնային բնույթ է ունենում: Այս

ոլորտի օբյեկտների գործունեությունը օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակներում արդյունավետ վերահսկողություն իրականացնելու համար, քաղաքապետի որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ: Նախատեսվում է առավելագույնս կանոնակարգել առևտրի և սպասարկումների ոլորտը:

1.11 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Քաղաքում գործում է մեկ միջնակարգ դպրոց 145 աշակերտով: Դպրոցը վերանորոգված է, ունի ջեռուցման լոկալ համակարգ: Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում են 28 ուսանողներ:

Գործում է Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատությունը՝ ՀՈԱԿ_ը, որն վերանորոգված է, գործում է ջեռուցման լոկալ համակարգը, ունի երեք խումբ՝ 75 սաներով:

1.12 ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Քաղաքում գործում է Օրբելի եղբայրների տուն – թանգարանը, մանկական արվեստի դպրոցը, քաղաքային գրադարանը, շախմատի ակադեմիայի տունը: Օրբելի եղբայրների տուն – թանգարանը վերանորոգվել է 2010թ. գտնվում է լավ վիճակում և իրականացնում է բազմաթիվ միջազգային, հանրապետական և մարզային ծրագրեր:

Քաղաքային գրադարանը գտնվում է առանձին շենքում, ունի մոտ 14 000 կտոր գրականություն, սպասարկում է ինչպես քաղաքի ազգաբնակչությանը, այնպես էլ հանգստացողներին: Գտնվում է բարվոք վիճակում, ապահովված է ջեռուցման լոկալ համակարգով:

Մանկական արվեստի դպրոցը ունի 56 սաներ, որոնք սովորում են 5 բաժիններում: Դպրոցը տեղավորված է մանկապարտեզում, ապահովված է գույքով:

Ծաղկաձոր քաղաքն այսօր ակտիվորեն զարգանում է, սակայն դուրս է մնում ժամանակակից մշակույթի զարգացման շրջանակներից և դրա պատճառը մշակութային կենտրոնի բացակայությունն է, որն այնքան անհրաժեշտ է քաղաքի ազգաբնակչության, հազարավոր զբոսաշրջիկների մշակութային կյանքը և հանգիստը արդյունավետ կազմակերպելու համար:

Մշակութային կենտրոնը կիրականացնի համակարգված կանոնավոր աշխատանք քաղաքի ազգաբնակչության մշակութային կյանքի, կրթա - դաստիարակչական և ռազմա – հայրենասիրական բնագավառներում: Այն միաժամանակ կդառնա ստեղծագործական ուժերի, նոր գաղափարների, նոր սոցիալական և մասնագիտական խմբեր ըստ հետաքրքրությունների և կգործի որպես բազմաֆունկցիոնալ համալիր: Այն մի նոր որակական աստիճանի կբարձրացնի համայնքի ազգաբնակչության մշակութային և հանգստի կազմակերպման աշխատանքները:

Ծաղկաձորն այսօր հանդիսանում է հանրապետության առաջատար զբոսաշրջիկային կենտրոններից մեկը, ուր այցելում են հազարավոր զբոսաշրջիկներ հանրապետությունից և արտերկրներից, ուստի մշակութային կենտրոնի ստեղծումը կնպաստի զբոսաշրջիկության զարգացմանը քաղաքում, կլուծի նրանց մշակութային, ազատ ժամանակի զբաղվածության խնդիրը, իսկ դա կարևոր խթան կհանդիսանա քաղաքում տուրիզմի սեզոնայինությունը երկարացնելու համար:

Այսօր կարելի է միավորել մշակութային կենտրոնի և բիզնեսի շահերը, ուստի կենտրոնը կարող է արդյունավետ աշխատել ինչպես բիզնեսի՝ կազմակերպելով տարբեր ֆորումներ, այնպես էլ մշակույթի և ազգաբնակչության հանգստի կազմակերպման համար: Միաժամանակ իր բազմաբովանդակ գործնետության շնորհիվ այն կարող է վերածվել տարածաշրջանային կենտրոնի: Քաղաքի մշակութային և ազատ ժամանցի կազմակերպման գործում կարևոր տեղ կզբաղեցնի քաղաքային զբոսայգին, որի կառուցման աշխատանքներն արդեն սկսվել են:

Քաղաքում գործում է հանրապետության Գլխավոր մարզահամալիրը և լեռնադահուկային մանկապատանեկան հանրապետական մարզադպրոցը, Հայաստանի շախմատի ակադեմիայի մեկ դասարան 15 աշակերտներով:

Սակայն, այսօր արդյունավետ չեն օգտագործվում Գլխավոր մարզահամալիրի հնարավորությունները քաղաքի ազգաբնակչության համար, ուստի անհրաժեշտ են իրականացնել որոշակի աշխատանքներ այս ուղղությամբ:

Լեռնադահուկային մանկապատանեկան մարզադպրոցում ընդգրկված են քաղաքի գրեթե բոլոր դպրոցահասակ աշակերտները՝ մոտ 140 հոգի:

Քաղաքում սպորտի հետագա զարգացմանը աջակցելու համար անհրաժեշտ է բացել սպորտային խմբակներ՝ ֆուտբոլի, բասկետբոլի, լողի և այլն:

Անհրաժեշտ է տանել աշխատանքներ քաղաքը լեռնադահուկային միջազգային մրցումների ճանաչված կենտրոն դարձնելու ուղղությամբ:

Կարևոր տեղ է զբաղեցնում նաև երիտասարդության հետ տարվող աշխատանքները: Կազմակերպվում են արշավներ, սպորտային մրցումներ և զանազան հանդիպումներ:

1.13 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Քաղաքում գործում է «Ծաղկաձորի բուժամբուլատորիա» ՊՓԲԸ, որն ապահովված է սարքավորումներով և շտապ օգնության մեքենայով, ունի 7 աշխատակից, որից 1 բժիշկ է:

Սակայն անհրաժեշտ է ընդարձակել բուժսպասարկման ոլորտները: Այսօր քաղաքի ազգաբնակչության համար կարևոր խնդիր է ատամնաբուժարանի բացակայությունը:

Համայնքի տարածքում գործում է 1 դեղատուն:

1.14 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Քաղաքային հանգստի գոտիներից են «Ծաղկունյաց» հրապարակը, 1 մանկական խաղահրապարակը, կառուցման ընթացքի մեջ է շուրջ 3կմ ձգվող ճեմուղին: Առաջիկայում նախատեսվում է կառուցել ևս մեկ քաղաքային հանգստի գոտի քաղաքի հյուսիս արևելյան մասում և 1 մանկական խաղահրապարակ:

1.15 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքի աշխարհագրական դիրքը բարենպաստ է համայնքի զարգացման համար: Համայնքը գտնվում է Հրազդան մարզկենտրոնից 8կմ հյուսիս-արևմուտք, մայրաքաղաք Երևանից հեռավորությունը կազմում է 50կմ,
- Հասանելի է ֆիքսված հեռախոսակապը, ինտերնետը, բջջային կապը, մալուխային հեռուստատեսությունը, քաղաքի գրեթե բոլոր փողոցներում գործում է անվճար Wifi ,
- Քաղաքապետարանի զարգացած տեղեկատվական համակարգի շնորհիվ առավելագույնս կազմակերպված է ազգաբնակչության սպասարկումը,
- Քաղաքի Տեղեկատվական կենտրոնի, ինչպես նաև տարբեր տեսանելի մասերում տեղադրված տեղեկատվական վահանակների, ինտերնետային կայքի և հանրային լուսմների կիրառմամբ տեղեկատվությունը ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ լիովին հասանելի է և հրապարակային,
- Երիտասարդության շրջանում բարձր մակարդակի վրա է գտնվում բարձրագույն կրթություն ստանալը և լավագույն մասնագետներ դառնալը,
- Մանմաքրման և աղբահանության մակարդակը գտնվում է բարձր մակարդակի վրա, կոմունալ տնտեսությունը աշխատում է բավականաչափ արդյունավետ և հուսալի,
- Համայնքի գրեթե բոլոր փողոցները լուսավորված են,
- Համայնքը ամբողջությամբ գազաֆիկացված է:

1.16 ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Վերջին 25 տարիների ընթացքում համայնքում չեն իրականացվել բնակարանային շինարարության ծրագրեր, շատ երիտասարդ ընտանիքներ ունեն բնակարանի կարիք,
- Հնացել և դժվարությամբ են շահագործվում համայնքի առանձին փողոցների ջրահեռացման և ջրամատակարարման համակարգերը, վերանորոգման կարիք են զգում դիտահորերի մեծ մասը, նորմալ կենսակերպին խանգարում է սահմանափակ և միայն որոշակի ժամերին տրվող ջրամատակարարումը, չկան անձրևաջրերի հեռացման համակարգեր,
- Կապիտալ նորոգման և բարեկարգման կարիք են զգում առանձին փողոցների մայրերը և բնակելի շենքերի բակային տարածքները,

- Քաղաքում բացակայում են կենցաղսպասարկման ոլորտի օբյեկտները,
- Բաց է մնում երիտասարդների և մեծահասակների ազատ ժամանակի և ժամանցի կազմակերպման խնդիրները,
- Համայնքը չունի գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական նշանակության պահուստային հողեր:

1.17 ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Համայնքում առկա է որոշակի քանակությամբ ազատ աշխատուժ,
- Փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգի ներդրումը քաղաքապետարանում արդյունավետ է դարձրել մարզպետարանի, նախարարությունների և մի շարք համայնքների հետ:
- Վերջին տարիներին համայնքի միջոցներով նորոգվել են Ծաղկաձորի միջնակարգ դպրոցը և նախադպրոցական ուսումնական հաստատությունը , ստեղծվել են նրանց գործունեության ապահովման համար համապատասխան պայմաններ,
- Հետևողական կերպով բարեկարգվել և գծանշվել են միջհամայնքային բոլոր ճանապարհները, անվտանգ երթևեկության համար ստեղծվել են բավարար պայմաններ,
- Բազմաբնակարանային բնակելի շենքերում իրականացվել են տանիքների և մուտքերի վերանորոգման, ջերմամեկուսացման աշխատանքներ,
- Լայնածավալ աշխատանքներ են իրականացվել փողոցների և բակային տարածքների լուսավորման համար,
- Հետևողական աշխատանքներ են տարվում չաշխատող բնակչությանը աշխատանքով ապահովելու և նոր աշխատավայրերի ստեղծման ուղղությամբ:

2.ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱԴՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Սոցներդրումների հիմնադրամի կողմից 2014 թվականին կիրականացվի «Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում, որի արժեքը կազմելու է 37.7 մլն դրամ:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3.1 ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի քառամյա զարգացման ծրագրի ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային պայմանները, համայնքը դարձնել մաքուր և բարեկարգ բնակավայր:

